ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N Ե8

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «29» հունվար 2015թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը, ի դեմս տնօրեն Ա.Կարախանյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), **«Լիթոսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. երկրաբանական վտանգավոր երևույթների և պրոցեսների գնահատումը»** ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 168 148 500 (մեկ հարյուր վաթսունութ միլիոն հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվամ՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների

գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 168 148 500 (մեկ հարյուր վաթսունութ միլիոն հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 154 696 600 (մեկ հարյուր հիսունչորս միլիոն վեց հարյուր իննսունվեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս. 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գամարի 8 (ութ) տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությանները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը (հավելված 1),

գ. Օրացուցային պլանը (հավելված 2),

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ ԳԱԱ	ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24ա
Արարատ բանկ ԲԲԸ հ/հ 1510005175820100 ՀՎՀՀ 00005673	Զարգացման Հայկական Բանկ հ/հ 1810052011143313 ՀՎՀՀ 00007498
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան	Տնօրեն՝ Ա. Կարախանյան
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրության) Կ.Տ

Հավելված 1
«29» հունվար 2015 թ.
N Ե-8 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

«Լիթոսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. երկրաբանական վտանգավոր երևույթների և պրոցեսների գնահատումը ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե
2. Աշխատանքի նպատակը՝ ՀՀ տարածքի ֆաներոզոյի երկրաբանական համալիրների կառուցվածքի, երկրաքիմիական առանձնահատկությունների և հասակի ճշգրտում, օգտակար հանածոների հանքավայրերի ձևավորման առանձնահատկությունների վերծանում, բնական վտանգների գնահատում, շրջակա միջավայրի վրա (ջրեր, հողեր) լեռնային արդյունաբերության ազդեցության գնահատում
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (1 էջի սահմաններում), (կից)
4. Աշխատանքի բովանդակությունը (3 էջի սահմաններում), (կից),
5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը՝ հոդվածներ, զեկուցումներ միջազգային գիտաժողովներում, տարեկան հաշվետվություն

Տնօրեն՝ _____ Արկադի Կարախանյան
(ստորագրություն) (անուն ազգանուն)

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները

ՀՀ տարածքը գտնվում է Եվրասիական և Արաբական սալերի բախման տիրույթում և ներառում էերկրաբանական տարբեր զարգացման պատմություն անցած բլոկների համադրություն: Այս հանգամանքը ՀՀ տարածքը դարձնում է չափազանց հետաքրքիր մի շրջան երկրաբանական գիտության տեսանկյունից է: Այդ իսկ առումով Հայաստանում համալիր երկրաբանական հետազոտությունների իրականացումը առաջնահերթ անհրաժեշտություն է, ինչը հնարավորություն կտա պարզաբանել և լուծել կարևոր նշանակություն ունեցող մի շարք երկրաբանական ինչպես հիմնարար, այնպես էլ կիրառական հիմնահարցեր և խնդիրներ:

Ծրագրով նախատեսված աշխատանքները պետք է ուղեկցվեն նախկինում կատարված նմանատիպ հետազոտությունների արդյունքների վերլուծմամբ, վիճելի հարցերի քննարկմամբ և ճշգրտմամբ, կարևորագույն խնդիրների վերհանմամբ: Առաջնահերթ ուշադրություն պետք է դարձվի բնական վտանգների, օգտակար հանածոների, նորագույն հրաբխականության, շերտագրության, օֆիոլիտային ասոցիացիայի, մագմատիկ ֆորմացիաների, շրջակա միջավայրի վրա լեռնահանքային արդյունաբերության ազդեցության հետ կապված տարաբնույթ հարցերի վրա: Նախատեսվող հետազոտությունները պետք է ուղեկցվեն դաշտային աշխատանքներով, մասնագիտացված նոր քարտեզների ու կտրվածքների կազմմամբ, բրածո ֆաունայի և իզոտոպային հասակային, ապարների, հանքանյութերի, ջրերի և հողերի նյութական կազմի նոր որոշումներով:

Ստացված արդյունքները կներկայացվեն հրատարակումների (ինչպես տեղական այդպես էլ արտասահմանյան պարբերականներում և ժողովածուներում) և հաշվետվությունների տեսքով:

4. Աշխատանքի բովանդակությունը

ՀՀ տարածքի սահմանային դիրքը Եվրասիական և Արաբական սալերի բախման տիրույթում որոշել է նրա երկրաբանական զարգացումը (պրոտերոզոյից մինչև չորրորդական ժամանակաշրջան) տարբեր երկրադինամիկական պայմաններում: Դրանով էլ պայմանավորված է ՀՀ տարածքի երկրաբանական համալիրների, օգտակար հանածոների, բնական վտանգների բազմազանությունը և նրանց հետ կապված երկրաբանական խնդիրների բարդությունը: Նախատեսված աշխատանքներն ուղղված են այս հարցերի պարզաբանմանը և ընդգրկում են դաշտային, կամերալ և լաբորատոր հետազոտություններ: Համաձայն ՀՀ ԳԱԱ ԵԳԻ 2015-2020 թթ. հիմնարար գիտահետազոտական աշխատանքների ուղղությունների հաստատված պլանի, 2015-ին կատարվելու են գիտական ուսումնասիրություններ հետևյալ ուղղություններով.

- Տայվանի համալսարանի հետ սկսված սեյսմոլոգիական և գեոդինամիկական հետազոտությունների մոնիթորինգային ցանցերի ընդլայնում, մասնավորապես՝ հետազոտություններ ՀՀ տարածքում տեղադրված լայնաշերտ սեյսմիկ GURALP -6TD տիպի կայանների և Trimble NetR9 տիպի տեղորոշիչ (GPS) սարքերի կիրառմամբ: Սեյսմիկ ցանցից ստացված տեղեկատվությունը կամփոփվի երկրաշարժերի կատալոգի տեսքով:
- ՀՀ և հարակից տարածքների գեոդինամիկ զարգացումների մոնիթորինգ, սեյսմիկ և համընդհանուր տեղորոշիչ համակարգերի մշտադիտարկում (ՀՏՀ-GPS), ստացված տեղեկատվության վերլուծություն՝ համագործակցելով հարևան երկրների մասնագետների հետ:
- ՀՀ տարածքի հրաբխականության ուսումնասիրություններ՝ ուղղված հրաբխա–տեկտոնական մոդելի ստեղծմանը, ներառյալ հրաբխային առաջացումների պետրոլոգա–երկրաքիմիան, պոտենցիալ վտանգավոր հրաբխային ժայթքումների տիպերի ուսումնասիրում, հաճախականության գործակցի գնահատում, մասնավորապես՝ վտանգավոր էքսպլոզիվ ժայթքումների:
- ՀՀ մետաղածնական գոտիների, օգտակար հանածոների հանքավայրերի առաջացման և տեղաբաշխման գեոդինամիկական առանձնահատկությունների բացահայտում, նոր և ոչ ավանդական տեսակի օգտակար հանածոների հայտնաբերում:
- Խմելու քաղցրահամ, մակերևութային, հանքային և հանքավայրային ջրերի կազմի ձևավորման բնական և անտրոպոգեն գործոններ: Էկոլոգաերկրաքիմիական վիճակի կանխատեսումային գնահատում, շրջակա միջավայրի վրա հանքավայրային ջրերի ազդեցության գնահատում:

- Աշխատանքներ ՀՀ տարածքի հնէաբանական և շերտագրական ստորաբաժանումների ճշգրտման և ժամանակակից միջազգային շերտագրական սանդղակներին համապատասխանեցման ուղղությամբ:
- Նորագույն հրաբխականության ուսումնասիրման շրջանակներում նախատեսվում են Վարդենիսի և Սյունիքի հրաբխային բարձրավանդակների երկրաբանական և հրաբխագիտական ուսումնասիրություններ, ինչպես նաև Լոռու սարավանդի և Արայի լեռան հրաբխային ապարների երկրաքիմիական տվյալների վերլուծություն՝ առաջացման պետրոլոգիական մոդել ստեղծելու նպատակով: Հատուկ ուշադրության կարժանանան հրաբխային վտանգին վերաբերվող հետազոտությունները:
- Գեոինֆորմատիկա ասպարեզում՝ ՀՀ և հարևան երկրների տարածքների համար տարածական և ատրիբուտիվ երկրաբանական, երկրաձևաչափական, ջրաբանական, համալիր տվյալների հենքի ստեղծում և վերլուծություն ԱՏՀ համակարգում:
- Կարևորագույն օգտակար հանածոների շարքում իրենց տեղն ունեն ջրերը: Խմելու քաղցրահամ, հանքային, մակերևութային հոսքի ջրերի կազմի ձևավորման հարցերի պարզաբանումը, բնական և անտրոպոգեն գործոնների ազդեցությունը նրանց որակի վրա ունեն առաջնահերթ գիտական և կիրառական նշանակություն: Նախատեսվում է հանքային տարածքներում շարունակել էկոլոգահիդրոերկրաքիմիական և էկոլոգալիթոերկրաքիմիական հետազոտությունները՝ ջրերի և հողերի վրա լեռնահանքային արդյունաբերության ազդեցության գնահատման նպատակով:
- Նկատի ունենալով ՀՀ տնտեսության համակարգում օգտակար հանածոների (Cu, Mo, Au և ուր.) հանքավայրերի նշանակությունը, ինստիտուտի աշխատանքներում զգալի տեղ են զբաղեցնում համալիր հետազոտություններն այդ ոլորտում: Շարունակվելու են հետազոտությունները (երկրաբանություն, տեկտոնիկա, երկրաքիմիա, մետասոմատոզ) Զանգեզուրի հանքային՝ պղինձ-մոլիբդեն-պորֆիրային և ոսկու ֆորմացիաների տարածման կարևորագույն շրջանում, պղինձ-հրաքարային, ծծմբա-հրաքարային ոսկեբեր ֆորմացիաների որոշ հանքային դաշտերում:
- Շարունակվելու են Գորիս-Որոտան դիատոմիտաբեր ավազանի հրաբխա-դիատոմիտային գոյացումների՝ որպես արդյունաբերության տարբեր ճյուղերում ոչ ավանդական միներալային հումքի, ինչպես նաև գյուղատնտեսության մեջ (ֆոսֆորային պարարտանյութ) օգտագործման հնարավորությունների պարզաբանման աշխատանքները:

Հավելված 2
«29» հունվար 2015 թ.
N Ե-8 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

«Լիթոսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. երկրաբանական վտանգավոր երևույթների և պրոցեսների գնահատումը ծրագրի

(ծրագրի անվանումը)

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	պահանջվող գումարը (հազ.դրամ)
1	Գրականության և ֆոնդային նյութերի մշակում	Ուսումնասիրվող նյութերի և օբյեկտների վերաբերյալ արխիվային տվյալների հավաքում	Ուսումնասիրման ենթակա նյութերի և օբյեկտների վերաբերյալ գրադարանային և արխիվային նյութերի հավաքում և մշակում	Նախկինում ստացված տվյալների համեմատություն նորերի հետ, կորելյացիա, համընկնելիության աստիճանի պարզաբանում	05.2015	4000.0
2	Դաշտային աշխատանքներ	Դաշտային երկրաբանական աշխատանքներ, դաշտային սարքավորումների տեղադրում, սպասարկում, պահպանություն	Ապարների, հանքանյութերի, ջրերի, հողերի նմուշարկում, երկրաբանական երթուղիներ, կտրվածքների կազմում,	Անհրաժեշտ նյութի հավաքում, եղած տվյալների ճշգրտում, կտրվածքների և մերկացումների գնահատում, դաշտային սարքավորումների տվյալների հավաքագրում	11.2015	29000.0
3	Անալիտիկ հետազոտություն-ներ	Հավաքված նյութի նյութական կազմի որոշումներ, լաբ. սարքավորումների սպասարկում,	Սիլիկատային, սպեկտրոմետրիկ, հիդրոքիմիական և այլ հետազոտություններ, շլիֆների պատրաստում	Հետազոտվող նյութերի կազմերի պարզաբանում, համեմատական անալիզ,	12.2015	20000.0
4	Ստացված նյութի մշակում	Տվյալների ստուգում, դասակարգում, մուտքագրում համակարգիչ	Համակարգչային աշխատանքներ, տվյալների նախնական խմբավորում և դասակարգում	Տվյալների բազաների, մոդելների կազմման և նախնական ստուգման աշխատանքներ	11.2015	83148.5
5	Հոդվածներ, տարեկան հաշվետվություն	Ստացված արդյունքների հրատարակում, զեկուցումներ, հաշվետվություն	Ստացված արդյունքների հրատարակում, զեկուցումներ, հաշվետվություն	Զեկուցումներ, հոդվածներ, տարեկան հաշվետվություն	12.2015	32000.0
						168148.5

ՀՀ ԳԱԱ նախագահություն

Նախագահ՝ Ռ.Մարտիրոսյան

(ստորագրություն)

ՌԱՖԱԵԼ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտ. ին-տ

Տնօրեն՝ Արկադի Կարախանյան

(ստորագրություն)

Հավելված 3
«29» հունվար 2015 թ.
N Ե-8 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

«Լիթոսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. երկրաբանական վտանգավոր երևույթների և պրոցեսների գնահատումը» ծրագրի

Մենք, ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի, և ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը, ի դեմս տնօրեն Ա.Կարախանյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «29» հունվարի 2015 թ. N Ե-8 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 168 148 500 (մեկ հարյուր վաթսունութ միլիոն հարյուր քառասունութ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ ԵԳԻ ՊՈԱԿ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պ., 24 ա
Արարատ բանկ ԲԲԸ h/h 1510005175820100 ՀՎՀՀ 00005673	Զարգացման Հայկական Բանկ h/h 1810052011143313 ՀՎՀՀ 00007498
Նախագահ Ռ.Մարտիրոսյան	Տնօրեն՝ Ա. Կարախանյան

Հավելված 4
«29» հունվար 2015թ.
N Ե-8 պայմանագրի

Գիտական ծրագրերի նախահաշիվ

NN ը/կ	ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձի չափը (ներառյալ եկամտային հարկը)	143040.0	32700.0	36780.0	36780.0	36780.0
2	տնտեսական և այլ ծախսեր	25108.5	929.7	5257.1	5257.1	13664.6
3	ընդամենը	168148.5	33629.7	42037.1	42037.1	50444.6

Տնօրեն՝ _____ Ա.Կարախանյան
(ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ Ս.Հովհաննիսյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Հաշվարկ-բացատրագիր

պահանջվող ֆինանսավորման մասին

«Լիթոսֆերայի ձևավորման, օգտակար հանածոների առաջացման, տեղաբաշխման և որոնման առանձնահատկությունները. երկրաբանական վտանգավոր երևույթների և պրոցեսների գնահատումը» ծրագրի կատարման համար անհրաժեշտ է հետևյալ հիմնական միջոցառումների իրականացումը.

Գրականության և ֆոնդային նյութերի մշակում, որը ենթադրում է ուսումնասիրվող նյութերի և օբյեկտների վերաբերյալ արխիվային տվյալների հավաքում, նախկինում ստացված տվյալների համեմատություն նորերի հետ, կորելյացիա, համընկնելիության աստիճանի պարզաբանում: Այս աշխատանքների համար, ըստ հավելված 2-ի, կպահանջվի 4000.0 դր.:

Դաշտային երկրաբանական աշխատանքներ, որոնք ընդգրկում են դաշտային սարքավորումների տեղադրում, սպասարկում, պահպանություն, ապարների, հանքանյութերի, ջրերի, հողերի նմուշարկում, երկրաբանական երթուղիներ, կտրվածքների կազմում: աշխատանքների նպատակը անհրաժեշտ նյութի հավաքում ն է, ինչպես նաև եղած տվյալների ճշգրտումը, կտրվածքների և մերկացումների կազմումը և գնահատումը, դաշտային սարքավորումների տվյալների հավաքագրումը: Այս աշխատանքների արժեքը կազմում է 29000.0 դր.:

Անալիտիկ հետազոտությունները ենթադրում են հավաքված նյութի նյութական կազմի որոշումներ, սիլիկատային, սպեկտրոմետրիկ, հիդրոքիմիական և այլ հետազոտություններ, շլիֆների պատրաստում, հետազոտվող նյութերի կազմերի պարզաբանում, համեմատական անալիզ: Այս աշխատանքները ներառում են նաև լաբորատոր գործիքների և սարքավորումների սպասարկումը: Աշխատանքների արժեքը կազմում է 20000.0 դր.:

Անալիտիկ հետազոտությունների արդյունքում ստացված նյութի մշակումը նախատեսում է տվյալների ստուգում, դասակարգում, մուտքագրում համակարգիչ, ապա՝ համակարգչային աշխատանքներ, տվյալների նախնական խմբավորում և դասակարգում, տվյալների բազաների, մոդելների կազմման և նախնական ստուգման աշխատանքներ: Աշխատանքների արժեքը կազմում է 83148.5 դր.:

Կատարված աշխատանքների արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն հոդվածների, տարեկան հաշվետվության և զեկուցումների տեսքով: Աշխատանքների արժեքը կազմում է 32000 դր.:

Ծրագրի ղեկավար _____ Արկադի Կարախանյան

(ստորագրություն) (անուն ազգանուն)